

## **ՔԱՂՎԱԾՔ**

### **Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի որոշումից**

**Երևան, 11 մայիսի 2020թ.**

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը 2020թ. մայիսի 11-ի նիստում քննարկեց դատախազ, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված Ա. Պ.-ին ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում նշանակելու վերաբերյալ դրական եզրակացություն տալու մասին ՀՀ գլխավոր դատախազի առաջարկությունը:

Հաշվի առնելով Ա. Պ.-ի անձնական և մասնագիտական որակները և ղեկավարվելով ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 27-ի թիվ 45 հրամանի հավելվածի 7-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Հանձնաժողովը

### **ՈՐՈՇԵՑ՝**

1. Դրական եզրակացություն ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ Ա. Պ.-ին ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում նշանակելու վերաբերյալ: